

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿԵԼՄԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ՍՆՐԳԵՑ ԴԱՐՈՆՏԱՆ

Մ. Նալբանդյանի կեղծանունների քննությանը նվիրված նախորդ հոդվածում¹ մենք փորձեցինք հիմնավորել «Կամսար Խաչատուրյան», «Կիրակոս Մարգարյան», «Մարտիրոս Ասլանբեկ» և «Պողոս Ղուկասյան» ծածկանունների պատկանելությունը Մ. Նալբանդյանին: Այժմ կանգ առնենք ևս երկու ծածկանունների՝ «Թյուքյունջի Հակոբ Հարությունյան Սերոբյանց» և «Մատուր Զեյնալի» վրա, փորձելով ապացուցել նրանց պատկանելությունը Մ. Նալբանդյանին: Այս վեց ծածկանունները Մ. Նալբանդյանինը լինելու հարցն առաջին անգամ առաջ է քաշել գրականագետ Աս. Ասատրյանը²: Ընդունելով նրա հիպոթեզը, մենք շարունակեցինք պրպտումները, բացահայտելով դրա օգտին խոսող նոր փաստարկներ:

1. «Թյուքյունջի Հակոբ Հարությունյան Սերոբյանց»: Այս ստորագրությամբ «Հյուսիսսփայլում» երկու հրապարակում կա. «Նամակ առ հրատարակիչը» (ս. 1 մարտի 1861 ամի, ի Մոսկվա)³ և «Նամակ առ հրատարակողը» (ս. 20 հուլիսի 1861 ամի, ի Մոսկվա)⁴: Բայց նախ կանգ առնենք այն առարկությունների վրա, որոնք առաջ է բերել այդ ստորագրությունը: Աշ. Հովհաննիսյանը, կրճատելով երկար ազգանունը և այն ներկայացնելով իբրև «Հակոբ Սերոբյան», գտնում էր, որ դա «իսկական անունն է»⁵, Հերքելով Աս. Ասատրյանի կարծիքը, «թե իբր Հակոբ Սերոբյան անվան տակ թաքնված է... Նալբանդյանը», նա գրում էր. «Ո՛ր Սերոբյանի լեզուն ու ոճը, ո՛չ էլ նրա ստորագրությամբ «Հյուսիսսփայլում» տպված գրվածքների ու թարգմանությունների բովանդակությունը թույլ չեն տալիս անելու նման ենթադրություն: Մնաց, որ Հակոբ Սերոբյանը կեղծանուն չէր, այլ իրական ղեմֆ: Նա ապրում էր, իրոք, Թբիլիսիում... նա մեկն էր այն հայերից, որոնք մասնակցում էին զեյթունյանին նյութական օժանդակություն ցույց տվող հայ ազգասերների ընկերությունը»⁶: Այստեղ ակնհայտ թյուրիմացություն է առկա: Նշված ստորագրությամբ «Հյուսիսսփայլում» վերոբերյալ երկու «նամակներից» զատ ոչինչ չի հրապարակվել (այդ թվում և նրա գոյություն չունեցող թարգմանությունները)⁷: Եթե Հակոբ Սերոբյանը, իրոք, Թբիլիսիում էր ապրում, ապա ինչու են երկու նամակներն էլ Մոսկվայից ուղարկվել, ինչու էր նրան հարկ եղել թաքցնելու իր գտնվելու վայրը: Այդ կեղծանվան նկատմամբ ավելի տարօրինակ է վարվել Ռ. Նանումյանը: Նա նրանից երկու անուն-ազգանուն է ստեղծել՝ «Թյուքյունջի Հակոբ Հարությունյան» և «Հակոբ Սերոբյան»: Միանալով Աշ. Հովհաննիսյանի կարծիքին, նա գրել է. «...Հակոբ Սերոբյանը չէր կարող Նալբանդյանը լինել, այլ նույն ազգանունը կրող Թբիլիսից «Հյուսիսսփայլին» թղթակցող (») մտավորականներից մեկը...»⁸:

1 ՀՍՍՀ ԳԱ օկրաբեր հասարակական գիտությունների», 1984, № 12, էջ 30—40:

2 «Գրական թերթ», 23. X. 1954:

3 «Հյուսիսսփայլ», 1861, № 6, էջ 482—490: Հոդվածում կատարված բոլոր ընդգծումները մերն են:

4 Նույն տեղում, № 9, էջ 242—250:

5 Աշ. Հ. «Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը», գ. 1, Երևան, 1955, էջ 154:

6 Նույն տեղում, գ. 2, Երևան, 1956, էջ 100:

7 «Հյուսիսսփայլ» ամսագիր, 1858—1864: Մատենագրություն, կազմեց Եվգ. Ներսիսյանը, Երևան, 1978:

8 Ռ. Ռ. զան Նանումյան, Ստեփանոս Նազարյան, Երևան, 1978, էջ 138, 283:

Հակոբ Սերոբյանցն «իրական դեմք» էր, այլ ոչ թե «Թյուֆյունջի Հակոբ Հարությունյան Սերոբյանց»։ Նա, իրոք, ապրում էր Թիֆլիսում և 1862 թ. մասնակցեց «գեյթնոցիներին նյութապես օգնող ընկերությունը»⁹։ Նա մտերիմ էր Ս. Նազարյանի ընտանիքին, նրան նյութական օգնություն էր ցույց տվել։ Երբ վերջինս գտնվում էր Թիֆլիսում, ինչը երևում է Ս. Նազարյանի 1866—1871 թթ. գրած նամակներից¹⁰։ Հ. Սերոբյանցին որպես Ս. Նազարյանի ընտանիքի «մտերիմներից» իր հուշերում հիշատակում է Քաջբերունին (Գ. Տեր-Հովհաննիսյան)¹¹։ Բայց Քաջբերունին, լինելով «Հյուսիսսփայլի» ակտիվ աշխատակիցը, նրանում 1861 թ. (№ 5) հրատարակված «Տեր Սարգիս» վեպի հեղինակը, Հ. Սերոբյանցին չի հիշատակում «Հյուսիսսփայլի» աշխատակիցների թվում, որոնց մասին նա այնքան հանգամանորեն պատմում է¹²։ Եվ, ակներևաբար, ոչ պատահականորեն, քանի որ իրական Հ. Սերոբյանցը չի աշխատակցել այդ ամսագրին, ինչպես և ընդհանրապես չի զբաղվել գրական գործունեությամբ։ Հենց նրա ազգանվանակցի ստորագրությամբ հրատարակված երկու «Նամակի» բովանդակությունը վկայում է, որ դրանց հեղինակը քաջատեղյակ էր «Հյուսիսսփայլի» գործերին և ոչ թե լավ ընկեր, ինչպիսին էր Ս. Նազարյանի համար Հ. Սերոբյանցը։

Ամենայն հավանականությամբ, իրական Հակոբ Սերոբյանցի հետ չշփոթվելու համար «Նամակների» հեղինակը նրա անվանն ավելացրել է «Թյուֆյունջի» մականունը և նրան դարձրել է ոչ թե Թիֆլիսի, այլ Մոսկվայի բնակիչ։ Արդեն ինքը՝ երկար ստորագրությունը, հետազոտողներին պետք է մղեր այն մտքին, որ դա իրական ազգանունն չէ, այլ կեղծանուն, ինչպես և այն ընկալել է Ա. Ս. Ասատրյանը։ Եվ այդ ազգանունը, մեր կարծիքով ընդունել է Մ. Նալբանդյանը։ Իր ժամանակին մենք առաջ հնք քաշել ենթադրություն, որ Մ. Նալբանդյանն այնքան էր տարվել «Բիրլիոտեկա դյալ շտենիյա» ամսագրի խմբագիր Օ. Սենկովսկու սրամիտ գրելաոճով¹³, որ իր «Մինին խոսք, մյուսին հարսն» (1858) վիպակի հերոսներից մեկին կոչել է Օ. Սենկովսկու առաջին կեղծանունով՝ Թյուֆյունջի-օղլու, դրանով իսկ ընդգծելով դրամատիկից նրա ծագած լինելը։ Մեր կարծիքով իր հիմնական կեղծանունը՝ «Կոմս էմմանուել», Մ. Նալբանդյանը հնարել է Օ. Սենկովսկու հայտնի կեղծանվան՝ «Բարոն Բրամբեուսի» ձևով¹⁴, ինչն ակնարկում էին նույնիսկ ժամանակակիցները¹⁵։

Հ. Սերոբյանցի առաջին «Նամակի» վերջում ակնհայտորեն նկատվում է, որ հեղինակը սրամտորեն իրեն ներկայացնում է իբրև «Թյուֆյունջի»։ «...Արաք-յալքը,— գրում է նա,— ձկնորս մարդիկ էին, Պավլոսը խորանակար էր, Բենիամին Ֆրանկլինը հասարակ գրաշար տպարանի և այլն և այլն։ Եվ Թյուֆյունջին կարող է խոսել ազգի մեջ, մանավանդ եթե գիտությունը ներողամտաբար կօգնե նորան, ուղղելով և լրացուցանելով նորա անաբվեստ խոսքի թերությունները»։

Կ. Խաչատուրյանի «Նամակի» կապակցությամբ արդեն ուշադրություն դարձրինք մի ոճական հնարքի վրա, որին դիմում է Մ. Նալբանդյանը՝ իրեն ձևացնել պարզամիտ-միամիտ մարդ։ «...Ինչ որ տեսա ու լսեցի, գրել եմ պարզ և անարվեստ ոճով»,— խոստովանում էր Կ. Խաչատուրյանը։ «Ա. Ա. Ն...»

⁹ «Բաների Հայաստանի արխիվներ», 1964, № 3, էջ 66, Հ. Մ. Պոդոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 757։

¹⁰ Ս. Մ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 345, 352, 387, 390, 409։

¹¹ Քաջբերունի, Ստեփանոս Նազարյանցի շուրջը վաթսուհինյակն թվականներում, էջ-միածին, 1917, էջ 28։

¹² Նույն տեղում, էջ 3—25։

¹³ Մ. Նալբանդյանը 1858—1859 թթ. թարգմանել է Օ. Սենկովսկու «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետը և «Լեթարա» արևելյան վիպակը։

¹⁴ Մ. Դարոնյան, Միքայել Նալբանդյան, Երևան, 1979, էջ 218։

¹⁵ «Մեղու Հայաստանի», 1866, № 4, Մ. Հ. Մխիթարյան, «Հյուսիսսփայլ» ամսագիրը, Երևան, 1958, էջ 64—65։

ստորագրութեամբ «Նամակ Կոմս էմմանուելին» հոդվածում, որը հրապարակված է «Հյուսիսսփայլի» նույն այն համարում (1861, № 9), ուր Սերբոբյանցի երկրորդ «Նամակն» է, հանդիպում ենք հեղինակի նույն խոստովանութեանը. «Ահա... իմ անարվեստ ոճով...» (III, 276—277)¹⁶։ Վերջապես, Սերբոբյանցի խոստովանութեանը՝ «անարվեստ խոսքի թերութիւնքը»։ Հազիվ թե հարկ կա կասկածելու, որ այդ բոլորը գրել է միևնույն անձնավորությունը՝ հենց Մ. Նալբանդյանը։ Դրան կարելի է ավելացնել, որ «Սերբոբյանց» ազգանունը կարող էր կազմվել Մ. Նալբանդյանի հայտնի «Սերովբե Շահբազ» կեղծանունից, ինչպես նա հաճախ անում էր՝ նոր կեղծանուններ ստեղծել հենքի հիման վրա։

Սերբոբյանցի «Նամակում» շատ էական է նաև մի այսպիսի հանգամանք. նա ամսագրի խմբագրին խնդրում է «ուղղել և լրացնել» իր գրածը։ Այդ ժամանակ արտասահմանում գտնվող Մ. Նալբանդյանը հույս ուներ, որ Մ. Նալբանդյանը կլրացնի իր գրածը, որը և արվել է (ստորև մենք դա ցույց կտանք)։

Մ. Նալբանդյանի ոճն ի հայտ է գալիս առաջին «Նամակից» վերը բերված արդեն առաջին դարձվածքից, որտեղ «հիմնավորվում է» հասարակ «թյուրությունը»՝ հնարավորությունը՝ խոսակցություն վարելու ազգային գործերի մասին։ Այստեղ Բ. Ֆրանկլինի անվան հիշատակումը պատահականություն չէ։ Մ. Նալբանդյանը մի անգամ չէ դիմել նրա հեղինակությանը։ Այսպես, իր «Հիշատակարանի» երկրորդ գլխում նա հաղորդում է «այն խոսակցությունը, որ պատահել է մի շինականի և մի վաճառականի մեջ»։ Վերջինս պատմում է շանթարգել գործիքի մասին, որը հնարել է Բ. Ֆրանկլինը և որի համար էլ փառաբանվել է։ Ջարմացած շինականը պատասխանում է. «Այդպիսի ոչինչ բանի համար. դա ի՞նչ է, որ մարդ փառավորվե» (III, 22—23)։ Նման պարզամիտ «շինական» է ձևանում նաև «Թյուրությունի Սերբոբյանցը»։

Դեռևս Աշ. Հովհաննիսյանն է նկատել, որ խոսակցությունը, հրկիսությունը (ավելացնենք՝ երկրորդություն-բանավեճը) Մ. Նալբանդյանի սիրած ձևերից էր¹⁷։ Այդ ձևով են կառուցված «Մինին խոսք, մյուսին հարսն» վիպակի առաջին գլուխը, «Հիշատակարանի» մի շարք գլուխներ՝ սկսած առաջինից, «Երկու տող» պամֆլետի, Մ. Նալբանդյանի գլխավոր աշխատության՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհի» առանձին էջեր և այլն։ Երկխոսության ձևով են գրված նաև Սերբոբյանցի առաջին «Նամակին» հավելված տեսնողանները (ինչպես պիեսում) և վերնագրված այսպես. «Խոսակցություն զանազան տեղերից եկավոր հայերի մեջ, մի ծանոթի սենյակում»։ Խոսակցից անձանց թվում են Միքայելը և Բարադամը, որոնք արտահայտում են հեղինակի մտքերը։ Եթե առաջին անունն ուղղակի հարաբերակցվում է Մ. Նալբանդյանի հետ, ապա երկրորդը կրկին «Մարա» («Արամ») տիպի շրջագրություն է. «Բարադամը» ընթերցվում է նաև որպես «Ղամբադ», որը նշանակում է լապտեր, ջահ, բոց, ճառագայթ, կանթեղ և այլն¹⁸։ Այդ այլաբանական կերպարը, որն արտահայտում է Սերբոբյանցի առաջին «Նամակի» հիմնական գաղափարը, խորհրդանշում է «Հյուսիսսփայլը», որի բնաբանում ասված է. «Այսուհետև լույս և ճշմարտություն և ազատություն խաղաղ բարեխոյան գերությունից»։ Այդ բնաբանը Մ. Նալբանդյանը բերում է իր «Նամակ Կոմս էմմանուելին» հոդվածի սկզբում (որը, ինչպես նշվեց, հրատարակվել էր Սերբոբյանցի երկրորդ «Նամակի» հետ միասին) և «Նամակի» այլաբանական մասում նա տեսնում է, որ Հայաստանում «շատ ժամանակից» «կախված կանթեղները խավար լուսավորության մեջ էին» (III, 275—276, 280)։ Դրանից առաջ նույն սիմվոլիկայով էին ներծծված Մ. Նալբանդյանի խոհերը նրա «Հիշատակարա-

¹⁶ Այստեղ և հետագայում մեղբերումները բերված են հետևյալ հրատարակությունից՝ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու 6 հատորով, հ. I—V, Երևան, 1979—1984։

¹⁷ Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., գ. 1, էջ 335, տե՛ս նաև՝ էդ. Զբաղյան, Միքայել Նալբանդյանը և արդիականությունը, Երևան, 1984, էջ 127։

¹⁸ Հմմտ. Եղիշի հետ. «Ղամբադ»-ի ձեռն առնալ՝ հրոյ ճարակ տալին՝ («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 2, Երևան, 1981, էջ 162)։

նում», նոր՝ 1859 թվականի առթիվ: Բայց եթե այն ժամանակ նա ասում էր, որ «խավար օբևանի մեջ... պիտո է մնանք՝ սպասելով հրեշտակապետի որոտ-րնդոտ փողահարությանը» (III, 103), ապա երեք տարի անց Բարադամի շուրթերով Մ. Նալբանդյանն ակտիվ գործողությունների կոչ է անում. «Թըշ-վառականը ուրախանալով և լուսատու ճռագը ձեռին գալիս է դեպի խավարի օբևանը և ասում է յուր ընկերներին. ահա ձեզ եղբարք, ճռագ ու ճանապարհ...»: Ուշագրավ է, որ «նամակ կոմս էմմանուելին» հոգվածում Մ. Նալբանդյանը «Հյուսիսսփայլի» խմբագրին պատկերում է որպես մարտիկի, որն «արդարասիրության և ազատամտության մուրճը ձեռքն առած անաշտապես փշրում է շատ զարտուղի ընթացքներ» (III, 275): Նա ցանկանում էր հենց այդպիսի մարտական օրգան տեսնել «Հյուսիսսփայլ» ամսագրիը:

Այսպիսով, Սերոբյանցի առաջին հրապարակման մեջ արդեն լսում ենք Փարիզում հրատարակված հեղափոխական մանիֆեստ «Երկու տողի» հեղինակ Մ. Նալբանդյանի կոչի ձայնը, կոչ, որը նույնպես գրվել էր 1861 թ. մարտին: Սերոբյանցի «Նամակում» այլաբանորեն հնչող մարտակոչը (ցարական գրաքննության պայմաններում այլ կերպ լինել չէր էլ կարող) «Երկու տողում» դրված է և՛ «բացահայտ շարադրանքով», և՛ նույն կերպարների՝ «լույսի» ու «խավարի», օգտագործումով: Մ. Նալբանդյանը գրում էր, որ «շատ դարեր զնացին մարդիկ» այն «խավար ճանապարհը, կամ թե ո՞րչափ մարդիկ դեռևս առ թարթափ գնում են նորանով, շատ անգամ... մի աղոտ լուսով լապտերի», «որ նորը պատերազմով պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակների վերա»: Եվ նա երգվում էր ոչնչացնել «թշվառությամբ պատճառները» (IV, 15, 9, 17): Ահա այստեղից Սերոբյանցի մարտյան «Նամակում» երևան է գալիս «թշվառականի լուսատու ճռագը ձեռին» «ղամբարի» այլաբանական կերպարը:

Սերոբյանցի հրապարակման մեջ շոշափված է հարցերի մեծ շրջանակ, որոնք հավասարապես հետաքրքրում էին և՛ Մ. Նալբանդյանին, և՛ Ս. Նազարյանին: Այդ իսկ պատճառով հասկանալի է, թե ինչու էր «Նամակի» հեղինակը «Հյուսիսսփայլի» խմբագրին խնդրում «լրացուցանել» նրա գրածը: Եվ, իսկապես, այդ նույն Բարադամի շուրթերից բխում են Ս. Նազարյանին պատկանող մտքեր: Դրանցից են Մ. Խորենացու վրա հենվելով Հայաստանի պատմության մասին արված ընդարձակ դատողությունները, որոնք համահնչուն են Ս. Նազարյանի «Պատմություն հայոց ազգի» («Հյուսիսսփայլ», 1860, № 1) հոդվածին: Մակայն, ամբողջությամբ առած, այդ հրապարակման վրա դրված է Մ. Նալբանդյանի վառ և սուր հրապարակախոսության կնիքը: Այստեղ ևս հանդիպում ենք նրա գրելածին՝ կրկնել սիրած պատկերավոր արտահայտությունները: Օրինակ, խոսելով այն ողորմելի վիճակի մասին, որում գտնվում էր այդ ժամանակվա հայկական ժողովրդի ստիկան, Սերոբյանցը բերում է Ղազար Փարպեցու հայտնի խոսքերը. «Խոզի հարսնացելով կոյաջուր բաղանիք»: Այդ նույն ասույթը Մ. Նալբանդյանն օգտագործել է «Հիշատակարանի» առաջին գլխում՝ «Մեղու Հայաստանի» նկատմամբ, ավելացնելով. «այդպիսի տգետ և կամավոր գիշերածին զավակների և այդպիսի լրագիր» (III, 13):

«Թյուֆյունջի... Սերոբյանց» ստորագրությամբ երկրորդ հրապարակումը՝ «Նամակ առ ճռագալուր», 2. Զերեբյանցի հետ «Հյուսիսսփայլի» բանավեճի շարունակություն է, այս անգամ Ս. Նազարյանի «Մենդեյսոն, Լեսինգ և Լավատեր վիճաբանելով կրոնի վերա» («Հյուսիսսփայլ», 1860, № 10) աղմուկ հանած հոդվածի շուրջը: Հանդես գալով ընդդեմ կրոնական մոլեռանդության և հանուն խղճի ազատության, Ս. Նազարյանը վճռականորեն հայ եկեղեցու ռեֆորմ էր պահանջում: Ինչպես և պետք էր սպասել, հոդվածը հարուցեց կղերականների և ռեակցիոն մամուլի բուռն բողոքը: «Հյուսիսսփայլի» վրա նորից կախվեց փակվելու վտանգը: Ս. Նազարյանն արիաբար պաշտպանվում էր և, ինչպես միշտ, «այն ափից» նրան օգնության ձեռք մեկնեց Մ. Նալբանդյանը, ուղարկելով իր «Նամակը»՝ «Թյուֆյունջի... Սերոբյանց» ստորագրությամբ:

Մ. Նալբանդյանը գտնվում էր Թիֆլիսում, երբ «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում (1860, №№ 31—37, հուլիս-սեպտեմբեր) լույս տեսավ Հ. Զերքեզյանցի «Նազարյանցը և նորա նշանակությունը հայոց գրականության մեջ» հոդվածի շարունակությունը, իսկ նույն ամսագրի № 43-ում գետեղվեց Մ. Մըսերյանի հոդվածը Ս. Նազարյանի «Մենդելսոն, Լեսինգ և Լավատեր վիճարանելով կրոնի վերա» հոդվածի դեմ: Մ. Նալբանդյանի «Նամակ Կոմս Էմմանուելին» հոդվածի (Ա. Ա. Ե...) ստորագրությամբ ծանոթագրություններում Մ. Մխիթարյանը նշում է, որ այդ հոդվածը Հ. Զերքեզյանցի, Մ. Մսերյանցի և Ս. Նազարյանի դեմ հանդես եկող «Մեղու Հայաստանի» մյուս հեղինակների հոդվածների արձագանքն էր (III, 438—442): «Հյուսիսսփայլի» հենց այդ համարում էլ (1861, № 9) հրատարակվել է նաև Սերոբյանցի «Նամակը»: Վերևում արդեն նշվեց Սերոբյանցի առաջին «Նամակի» և «Նամակ Կոմս Էմմանուելինի» միջև եղած կապի մասին: Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքերում հեղինակն իրեն ներկայացնում էր իբրև միամիտ մարդ՝ իր «անարվեստ ու ճով» (խոսքով): Այդ դիմակը «Թյուֆյունջի... Սերոբյանցը» պահպանեց նաև իր երկրորդ «Նամակում», քանի որ հակառակ դեպքում նա իրեն կմատներ: «Նամակը» ներկայացվում էր իբրև «միամիտ հասարակության» անունից գրված, իսկ հեղինակը բազմիցս ասում է. «մեք ժողովրդականք»: Այն, որ Ս. Նազարյանը լայն հասարակության նման աջակցության կարիքն ուներ, երևում է 1861 թ. հոկտեմբերի 20-ին Հ. Սայաթնովյանին նրա գրած նամակից: Անդրադառնալով իր վրա կատարվող հարձակումներին, նա գրում էր, որ «դուք, աշխարհախնդ» պետք է ձայն տաք, որոտաք և հայտնեք ձեր կարծիքը»¹⁹: Բացառված չէ, որ Ս. Նազարյանը նման նամակ է գրել նաև Մ. Նալբանդյանին, որի հետ նամակագրական կապ ուներ: Ինչպես ենթադրում է Մ. Մխիթարյանը, «Նամակ Կոմս Էմմանուելինը» ուղարկվել է Կ. Պոլսից (III, 441): Մ. Նալբանդյանն այստեղից կամ ուրիշ տեղից կարող էր ուղարկել նաև Սերոբյանցի՝ միաժամանակ հրատարակված «Նամակը»:

Մ. Նալբանդյանի ծոցատետրում նշված նամակների ցանկից երևում է, որ նա Ս. Նազարյանին գրել էր մի քանի նամակներ՝ 1860 թ. սեպտեմբերի 14-ին (էջմիածնից), դեկտեմբերի 14-ին և 20-ին (Կ. Պոլսից), 1861 թ. հունվարի 17-ին (Լոնդոնից), որոնք, հավանաբար, դեռ տեղ չէին հասել: Ս. Նազարյանը 1861 թ. մարտի 29-ին Ա. Մխիթարյանին գրում էր, որ «Նալբանդյանցը այս րոպեիս Լոնդոնումն է, ոչինչ լուր չունիմ նորանից և ոչինչ գործակցություն «Հյուսիսսփայլին»²⁰: 1861 թ. մայիսի 4-ին Մ. Նալբանդյանը Կահիրեից Ս. Նազարյանին գրում է ևս մեկ նամակ: Այդ նամակները, ցավոք, արտասահմանից նրա գրած նամակների մեծամասնության նման մեզ չեն հասել: Բայց այն, որ Մ. Նալբանդյանը կապ է ունեցել Ս. Նազարյանի հետ՝ ասպնդցվում է թեկուզ վերոհիշյալ նամակով, այլապես վերջինս ինչպես կարող էր իմանալ, որ «Նալբանդյանցը այս րոպեիս Լոնդոնումն է», և նա գրեթե չէր սխալվում. Մ. Նալբանդյանը Լոնդոնից Փարիզ է մեկնել 1861 թ. մարտի 13-ին: 1861 թ. երկրորդ կեսին «Հյուսիսսփայլում» հրատարակվել է Մ. Նալբանդյանի գրված պատկանող երեք նյութ՝ «Ա. Ա. Ե...» ստորագրությամբ՝ «Նամակ Կոմս Էմմանուելինը» (№ 9), «Հոռմեական նամակը» (№ 10)՝ Ալֆոնզո Ռաթթի ստորագրությամբ և «Խուլացի աղջկա երգը» (№ 11)՝ հռչակավոր բանաստեղծությունը՝ Կոմս Էմմանուել ստորագրությամբ: Նույն ճանապարհով կարող էին «Հյուսիսսփայլի» խմբագրությունը հասնել նաև Սերոբյանցի երկու «Նամակները», որոնք հրատարակվել են ամսագրի հունիսյան և սեպտեմբերյան համարներում: Ուշագրավ է այն հանգամանքը, որ նշված նյութերը ստորագրված են կեղծանուններով, իսկ դրանց գրության ժամանակն ու տեղը (Թիֆլիս, Մոսկվա, Հռոմ, Զոդեն) մտացածին են:

19 Ս. Մ. Նազարյան, Նամակների, էջ 250:

20 Նույն տեղում, էջ 242:

Սերոբյանցի առաջին «Նամակի» նման Ս. Նազարյանն օգտագործել էր հեղինակի կողմից իրեն տրված իրավունքը՝ «լրացնելու» տեքստը, բայց երկրորդ «Նամակում» դա հարկավոր էր անել ավելի զգույշ, քանի որ «Հյուսիսսփայլի» հենց նույն համարում գետնադրված էր իր՝ Ս. Նազարյանի ստորագրության մեջ նամակ՝ ուղղված «Ծնաբաղում» նույն այդ ելույթների դեմ («Մի քանի իմսեր առ Հովսեփ Չերքեզյանցը, և հրապարակական նամակ առ պատվելի հայոց ազգը»): Իսկ այն, որ Ս. Նազարյանը միջամտել է Սերոբյանցի երկրորդ «Նամակի» տեքստին, կարելի է համոզվել դրա առանձին հատվածները համեմատելով 1861 թ. սեպտեմբերի 15-ին (ռուսերենով) Կովկասյան կոմիտեի գլխավոր լիազոր Վ. Բուտկովին նրա գրած մեծ նամակի հետ: Դրանում «Հյուսիսսփայլի» խմբագիրը վճռական բողոք էր հայտնում «Չերքեզյանցի և նրա հղալարակիցների» դեմ, որոնք իր և իր «աշխատակիցների» (ակնարկում է Մ. Նալբանդյանին) վրա հարձակվել էին շարամիտ և զրպարտական հոգվածներով, որի հետևանքով «Հյուսիսսփայլը» ստիպված էր «պատժի» գեներալ-օգտագործելը²¹: Իսկ, ինչպես հայտնի է, այդ զենքին Մ. Նալբանդյանը հիանալի էր տիրապետում:

Սերոբյանցի «Նամակի» հետ գրեթե միաժամանակ Մ. Նալբանդյանը «Երկու տող» պամֆլետում, արձագանքելով Ս. Նազարյանի հոդվածի դեմ կատարվող հարձակումներին, պահանջեց հայ եկեղեցու արմատական ռեֆորմ, հայտարարելով, որ «Հյուսիսսփայլը» իրավունք ունի «հայոց եկեղեցու ոտքից մինչև գլուխ ռեֆորմը պահանջելու»: Եվ Մ. Նալբանդյանն ինքը առաջադրեց կետեր, որոնցով Ս. Նազարյանի առաջարկությունների ոգով պետք է անցկացվեր հայ եկեղեցու ռեֆորմը (IV, 19—21): Սակայն այդ ամենն ասվել էր Ռուսաստանի հայ ընթերցողներին անմատչելի գրքուկում և այդ ժամանակ ասպարեզում երկրորդ անգամ հանդես է գալիս նալբանդյանական գրական կերպարը՝ «Թյուֆյունչի... Սերոբյանցը», որն անարգանքի սյունին է դամում Հ. Չերքեզյանցին ու նրա համախոհներին: «Նամակի» հեղինակն իր հակառակորդին «պարզեում» է նույն այն մակդիրներով, ինչ որ Մ. Նալբանդյանի նախորդ հրապարակումներում է: Նա Հ. Չերքեզյանցի ելույթն անվանում է «հայհոյություն», նրան կոչում է «ճեզվիտ» (Մ. Նալբանդյանի սիրած արտահայտությունն է), որն ունի «գոթոխական իրավունք», «մերած սիրտ և հոգի» և այլն և այլն: Սրանք բոլորը Մ. Նալբանդյանի սատիրայից են:

Եվ այսպես, «Թյուֆյունչի Հակոբ Հարությունյան Սերոբյանցը» Մ. Նալբանդյանի ևս մեկ կեղծանունն է:

2. «Մառառ Չելեպի»: Այս ստորագրությամբ հրապարակված է «Նամակ առ հրատարակողը» («15-ին մայիսի, 1862 թվականի. Թիֆլիս») ²², «Հյուսիսսփայլի» այդ նույն համարում Մ. Չելեպու «Նամակից» հետո Մ. Նալբանդյանի ստորագրությամբ հրապարակված է «Հայտարարություն»՝ պատմական Հայաստանի քարտեզի հրատարակության մասին: Այն թվագրված է՝ «Հունիս 20, 1862: Մ. Պետերբուրգ» (IV, 116): Մ. Նալբանդյանը արտասահմանից Պետերբուրգ է վերադարձել 1862 թ. մայիսի 25-ին կամ 26-ին, «Հյուսիսսփայլի» մայիսյան (հինգերորդ) համարի գրաքննչական թույլտվությունը ստացվել է հունիսի 22-ին, իսկ 2—3 օրից հետո Մ. Նալբանդյանը գնացել է Մոսկվա, աֆսոսելից՝ Նոր Նախիջևան ²³, Այնպես, որ նա միանգամայն կարող էր հասցնել երկու փոքր նյութ գրել՝ «Հայտարարություն» և «Նամակ» (Մ. Չելեպի ստորագրությամբ), որոնք գետնադրված են համարի վերջում: Մեր կարծիքով, այդ երկու նյութերի պատճառով 5-րդ համարը ձգձգվել է: Գտնվելով Պետերբուրգում, Մ. Նալբանդյանը կամ գրաքննչական կոմիտե հանձնելու համար իր տրամադրության տակ է ունեցել ամբողջ 5-րդ համարը (ինչպես նա այդ խմբ-

²¹ Նույն տեղում, էջ 245—248:

²² «Հյուսիսսփայլ», 1862, № 5, էջ 227—234:

²³ Ա. Մ. Ին ճիկյան, Մ. Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1980, էջ 209—213:

բազրի հանձնարարությամբ անում էր Պետերբուրգի համալսարանում ուսանելու ժամանակաշրջանում), կամ թե Ս. Նազարյանն ինքն է տարել այդ համարի ձեռագիրը: Այլ կերպ նրանում ինչպե՞ս կարող էր հայտնվել Մ. Նալբանդյանի «Հայտարարությունը»:

Ինչպես էլ դա եղած լինի, Մ. Չելեպու «Նամակում» զգացվում է Մ. Նալբանդյանի ձեռագիրը: Դա ամենից առաջ ինքը՝ կեղծանունն է: Ծառուր (Պոդոսյան) անունով նա ստորագրել է իր «Նամակ հրատարակողինը» (1859 թ.), իսկ «Չելեպի» բառը, որ նշանակում է «տագր» («գեբր»), գործածվում էր Մ. Նալբանդյանին հարազատ նախիջևանյան բարբառում²⁴: Մինչ այդ Մ. Նալբանդյանն արդեն ունեցել էր մի «նախիջևանյան» կեղծանուն՝ «Պախալյան» («նպարավաճառ»՝ «պախալ» բառից): Այդ ստորագրությամբ նա, ինչպես արդեն պարզել ենք, 1859 թ. «Հյուսիսսփայլում» հրապարակել է իր երեք աշխատությունները²⁵: «Թյությունքի Սերոբյանցը» ևս նախիջևանյան ծագման է: Ինչ վերաբերում է ժամանակին ու տեղին (Թիֆլիս), ապա դրանք ևս մյուս դեպքերի նման մտացածին են:

Մ. Չելեպու «Նամակը» բաղկացած է երկու մասից. առաջինում խոսվում է բաժանորդների թվաքանակի կտրուկ կրճատման պատճառով «Հյուսիսսփայլի» ծանր դրության մասին, իսկ երկրորդ մասը նվիրված է ազգային դպրոցներին և ուսումնարաններին: Մ. Նալբանդյանը, գտնվելով արտասահմանում (1860 թ. վերջից մինչև 1862 թ. մայիսի վերջը), շնայած և «Հյուսիսսփայլի» հրատարակչական գործերին անմիջական մասնակցություն չի ցուցաբերել, սակայն շարունակել է ամսագրում տպագրվել և բարոյապես օգնել նրան: Այսպես, լինելով Լոնդոնում և իմանալով «Հյուսիսսփայլի» հրատարակման դժվարությունների և նրա դեմ կատարվող հարձակումների մասին, Մ. Նալբանդյանը ուղարկում է «Նամակ Կոմս Էմմանուելինը» («Հյուսիսսփայլ», 1861, № 9)՝ ի պաշտպանություն «Հյուսիսսփայլի»: Այդ «Նամակի» սկիզբը նմանվում է Մ. Չելեպու «Նամակի» սկզբին: «...Ցավալի հայոց ազգ,— գրում էր Մ. Նալբանդյանը,— մինչև ե՛րբ պիտո է մնաս այդ մահաբեհ քե՛ր մեջ, մինչև ե՛րբ պիտո է քո նախկին կենդանության շունչը աննորոգելի մնա այս քո թույլ վավակների մեջ...» (III, 276): Իսկ ահա թե ինչ է ասում Մ. Չելեպին իր «Նամակում»։ «Մեր հայրերը կամ պիտի զարթնուն դեպի մի նոր կենդանություն, կամ պիտի մեռանք մի հավիտենական ազգային մահով...»:

Հայ ժողովրդի զարթոնքի միտքը Մ. Նալբանդյանն առաջ էր քաշում սկսած «Հյուսիսսփայլի» հրատարակման թվականից մինչև իր կյանքի վերջը: Այն ամբողջ ձայնով հնչեց երիտասարդությանը Մ. Նալբանդյանի ուղղած կոչում, որով սկսվում է Ռուսաստան վերադառնալու նախօրյակին Փարիզում նրա հրատարակած «Ներկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը. «Թողե՛ք մեռելներին թաղել յուրյանց մեռելները,— բացականչում էր Մ. Նալբանդյանը,— նոցա արևը մտած է. իսկ դուք կենդանի եք և ապագայի արշալույսը ձեր գլխի վերա է բացվում... Հառա՛շ... Կենդանություն» (IV, 35): Վերջապես, Մ. Չելեպու «Նամակի» հետ միաժամանակ Մ. Նալբանդյանի հրապարակած «Հայտարարության» մեջ կարդում ենք. «Եթե հավատում են, թե մոտենում է ժամանակը, երբ ազգը պիտի սթափվե՛ր յուր դաբավոր թմրությունից...» (IV, 111): Եվ ահա, գալով Պետերբուրգ, Մ. Նալբանդյանը Մ. Նազարյանից լսում է, որ «Հյուսիսսփայլի» վիճակը ծայրահեղ բարդացել է. Մ. Չելեպու «Նամակում» բերվում են Մ. Նազարյանի բառերը նրա «Ծանուցումից» («Հյուսիսսփայլ», 1860, № 7) այն մասին, որ «բոլոր աշխատության ծանրությունը մնում է հրապարակողի վերա»։ Այնուհետև Մ. Չելեպին հաղորդում է, որ «Հյուսիսսփայլի» հրատարակիչը ստիպված կրճատել է ամսագրի ծավալը, որպեսզի փրկի ամսագիրը: Այդ ամենի մասին Ս. Նազար-

²⁴ Այդ բառը հանդիպում է Ռ. Պատկանյանի նախիջևանյան պատմվածքներում (Ռ. Պատկանյան, Նրկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1966, էջ 606):

²⁵ «Գրական թերթ», 24. III. 1967:

յանը հաղորդում է 1862 թ. ապրիլի 9-ին Շ. Սայաթնովյանին գրած նամակում²⁶։ Ունենալով այդ բոլոր տվյալները, Մ. Նալբանդյանը, ինչպես ենթադրում ենք, դրանց տալիս է սուր հրապարակախոսական նամակի ձև, որպիսիք նա արդեն գրել էր։ Մ. Չելեպու «Նամակի» հենց շարադրանքում բացահայտորեն ղգացվում է Նալբանդյան-հրապարակախոսի ոճը, հրապարակախոս, որը հանդես է գալիս ի պաշտպանություն ճազատամիտ և ազատախոս «Հյուսիս-ստփայլի», ինչպես նա մի անգամ չէ, որ բնութագրել է հայկական մամուլի այդ առաջադեմ օրգանը։ Բերենք օրինակներ. 1. Մ. Չելեպին գրում է, որ նա, ով ընթանում է «ժամանակի հետ... մեռած է» և «ամենևին նման այն անպտուղ թզենուն, որ մեր տերը չորացրեց, որովհետև նա անխորհուրդ տեղ էր բռնում հողի վերա»։ Նույն այդ պատկերավոր համեմատությունը Մ. Նալբանդյանը բերում էր «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» հոդվածում (II, 264)։ 2. խոսելով հայերի շրջանում վաղուց արմատացած բարոյական ախտերի մասին, Մ. Չելեպին դրանց շարքում է դնում «դժոխարմատ նախանձը»։ Այդ ախտի մասին Մ. Նալբանդյանը գրել էր դեռ իր «Յաղագս հայկական մատենադրութեան ճառ» վաղ շրջանի աշխատության մեջ (II, 52), իսկ «Մատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետում դժոխքի բնակիչների թվում հիշվում են նաև «նախանձողը» (I, 374)։

Մ. Չելեպու «Նամակի» երկրորդ մասն ուղղված է նրանց դեմ, ովքեր անտարբեր էին ազգային դպրոցների հարցում, հարց, որը հավասարապես հետաքրքրում էր թե՛ Մ. Նալբանդյանին և թե՛ Մ. Նազարյանին։ Եթե վերջինս եռանդուն քայլեր էր կատարում Մոսկվայում հայ ուսումնական և գործնական դպրոց բացելու համար, ապա հենց այդ ժամանակ Մ. Նալբանդյանը Հնդկաստանից բերում էր կտակված գումարներ՝ Նոր Նախիջևանում ազգային ուսումնարան բացելու համար, ինչի մասին նա իր «Հիշատակարանում» երազում էր դեռ 1858 թ.։ Մ. Չելեպու «Նամակի» այդ մասում ևս ղգացվում է Մ. Նալբանդյանի ոճը։ Նորհելով ազգային գործերի մասին, «Նամակի» հեղինակը գրում է. «Ով ունի ականջ լսելու, թո՛ղ լսե»։ Դա Մ. Նալբանդյանի սիրած և հաճախ օգտագործած ասացվածքն է։ Նրա վաղ շրջանի (1857—1858) անտիպ հոդվածներից մեկն անվանում էր՝ «Ասվում է լսելու համար», որտեղ օգտագործվում է հիշյալ ասացվածքը. «Ով որ ականջ ունի լսելու, թո՛ղ լսե, պատճառ, որ ասվում է լսվելու համար» (II, 339)։ Այդ արտահայտությունը հանդիպում է Մ. Նալբանդյանի և այլ աշխատություններում՝ «Յաղագս հայկական մատենագրութեան ճառ» (II, 14), «Նկատողությունք» (II, 321), «Հիշատակարան» (III, 21, 190)։ Այն Մ. Նալբանդյանն օգտագործում է այլ արտահայտության՝ «Ձայն բաղբառո հանապատի» (II, 77) հետ, որին ամենից հաճախ էին բախվում և՛ ինքը, և՛ Մ. Նազարյանը...

Իր «Նամակի» վերջում Մ. Չելեպին խոստովանում է, որ ինչքան էլ դժվար լինի խոստովանել դառն ճշմարտությունը, հարկ է այդ անել, քանի որ «մեղորոտ խոսքերով ամենադառն խնդիրների վերա խոսել, կարող էին միայն խելամեծերը»։ Մ. Նալբանդյանի համար «եզուիտ» («ճիզվիթ») հասկացությունը երկերեսանիություն, կեղծ բարեպաշտության և խորամանկության հոմանիշ էր (տե՛ս նրա «Հիսուսյանք» հոդվածը՝ հավելված է. Սյուրի «Թափառական հրեա» վեպի թարգմանությանը, ինչպես նաև նրա «Մխիթար Սեբաստացի և Մխիթարյանը» հոդվածը)։ Իր «Հիշատակարանում» Մ. Նալբանդյանը Մ. Չելեպու նման հայտարարում էր. «...Թող հեռի մնան այդ դժոխային հնարքը, նոքա սեփական են... ճիզվիթեներն...» (III, 171)։ Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ «Մատանայի պաշտոնական մեծ հանդեսում» դժոխքի բնակիչների շարքում Մ. Նալբանդյանն առաջին տեղում է դնում «կեղծավորներին», այսինքն՝ ճիզվիտներին (I, 374)։

Բերված փաստերը, մեր կարծիքով, թույլ են տալիս եզրակացնելու, որ «Մատուր Չելեպի» ստորագրությամբ «Նամակը» ևս պատկանում է Մ. Նալբանդյանի գրչին։

²⁶ Մ տ. Ն ա զ ա Ր յ ա ն, Ն ա մ ա կ ա ն ի, էջ 255։

Ամփոփենք. մենք երկու հոգվածներով փորձեցինք սեփական փաստարկներով լրացնել դեռ 1954 թ. Ա.ս. Ասատրյանի առաջ քաշած հիպոթեզը: Դրանց մի մասը կարող են թվալ վիճելի կամ քիչ համոզիչ, բայց դրանք հարկ է դիտարկել ոչ թե յուրաքանչյուրն առանձին, այլ ընդհանրության մեջ՝ Մ. Նալբանդյանի հրատարակախոսության լեզվի ու ոճի առանձնահատկությունների ընդհանուր համակարգում, որը և ձգտեցինք անել:

Մ. Նալբանդյանի նոր կեղծանունների ուսումնասիրության ժամանակ մենք բացահայտեցինք մի շարք ընդհանուր օրինաչափություններ՝

1. Նոր կեղծանուններ կազմելիս Մ. Նալբանդյանն օգտվել է իր արդեն ունեցած կեղծանուններից՝ «Կամսար Խաչատուրյան» — «Սիրովբե Խաչատուրյան Շահբեզ», «Մարտիրոս Ասլանբեկ» — «Մարտիրոս Սառաֆյան» և «Շահբեզ», «Պողոս Ղուկասյան» — «Մատուր Պողոսյան», «Մատուր Զելեպի» — «Մատուր Պողոսյան» և այլն:

2. Հիշատակված կեղծանուններով հրապարակված բոլոր նյութերը ներկայացված են ճամփա-հոգովածի տեսքով, որը շատ բնութագրական է Մ. Նալբանդյանի հրապարակախոսության, հատկապես նրա «Հիշատակարանի» համար: Բնութագրելով Մ. Նալբանդյանի արձակի գեղարվեստական առանձնահատկությունները, ՀՍՄՀ ԳԱ ակադեմիկոս էդ. Զորաշյանն իրավացիորեն նկատել է. «Ավելի քան հավանական է ենթադրել, որ այդ նամակները (ս`Հիշատակարանում» — Մ. Դ.) Մ. Նալբանդյանի նախասիրած նույն գրական հնարանի արտահայտությունն են»²⁷:

3. Մեր դիտարկած բոլոր հրապարակումներում ի հայտ է գալիս Մ. Նալբանդյանի ոճին բնորոշ մակգիրների, պատկերավոր արտահայտությունների կրկնությունը և այլն:

4. Իրենց բովանդակությամբ բոլոր հոգվածները սերտորեն կապված են Մ. Նալբանդյանի գաղափարական պայքարի հետ: Այդ իսկ պատճառով Աշ. Հովհաննիսյանն իրավացի չէր գրելով, որ Ա.ս. Ասատրյանի ենթադրությամբ կեղծանուններով ստորագրված հոգվածներն «աննշան հոգվածներ են»²⁸: Իրականում, ինչպես ցույց տրվեց, դրանք հսկայական հետաքրքրություն են ներկայացնում և նշանակալիորեն հարստացնում են հայ մեծ հեղափոխական-դեմոկրատի գրական ժառանգությունը:

К ВОПРОСУ О ПСЕВДОНИМАХ М. НАЛБАНДЯНА

СЕРГЕЙ ДАРОНЯН

Резюме

В 1954 и 1960 гг. литературовед Ас. Асатрян выступил в печати с гипотезой о принадлежности М. Налбандяну нескольких ранее неизвестных псевдонимов. На основе тщательного дополнительного текстологического и сопоставительного анализа полностью подтверждается его гипотеза. В предыдущей публикации («Вестник общественных наук», 1984, № 12) были обоснованы четыре псевдонима Налбандяна («Камсар Хачатурян», «Киракос Маркарян», «Мартирос Асланбек», «Погос Гукасян»), в данной статье атрибутируются еще два псевдонима — «Тютюнджи Аюп Арутюнян Серобянц» и «Цатур Челепи». Напечатанные в журнале «Юсисапайл» («Северное сияние») за 1860—1862 гг. статьи за всеми указанными подписями как по содержанию, так и по стилю отражают ту острую непримиримую борьбу, которую вел Налбандян со своими идейными противниками, отстаивая позиции передового журнала.

²⁷ է գ. Զորաշյան, նշվ. աշխ., էջ 123:

²⁸ Աշոտ Հովհաննիսյան, նշվ. աշխ., գ. 1, էջ 154: